

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆՂԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
«ՎՏԲ-Հարմարավետ բիզնես»
ԹԻՎ _____

ДОГОВОР СРОЧНОГО ДЕПОЗИТА
“ВТБ-Комфортный бизнес”
НОМЕР _____

կնքման վայր _____ ամսաթիվ _____

Место заключения _____ дата _____

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ), ի դեմս _____
-----մասնաճյուղի կառավարիչ/ՆԱԲ պետ -----
-, որը գործում է 00.00.00թ. տրված թիվ ----- լիազորագրի
հիման վրա մի կողմից և ԱԶ ----- (այսուհետ՝
Ավանդատու),(անճնագիր -----, տրված ----- կողմից ,
00.00.00թ., գտնվելու վայրը -----), որը գործում է -----
թ. տրված ----- ՀՀ պետական ռեգիստրի հիման վրա,
մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն
պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

ЗАО “Банк ВТБ (Армения)” (далее Банк), в лице начальника
ООК/управляющего _____ филиалом, действующего на
основании доверенность номер -----, от 00.00.00г с одной стороны
и ИП ----- (далее Вкладчик) (паспорт -----,
выданный -----, от 00.00.00г.место нахождения -----),
действующего на основании удостоверения Государственного
регистра, N -----, выданного от -----, с другой стороны,
заключили настоящий Договор (далее Договор) о следующем:

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Բանկը Ավանդատուի համար բացում է ժամկետային ավանդային հաշիվ՝ (այսուհետ՝ Ավանդ) 0.000.000 (զումարը բառերով) (նշվում է Ավանդի արժույթը) գումարով:
- 1.2. Սույն Պայմանագրի 1.1 կետում նշված գումարը Բանկը Պայմանագրի համաձայն փոխանցում է Ավանդատուի Բանկում գործող թիվ N _____ բանկային հաշվից Ավանդային հաշվին:
- 1.3. Ավանդի ժամկետը սահմանվում է (օրերի թիվը բառերով) օր, մինչև--/--/--(ներառյալ):
- 1.4. Ավանդի տարեկան տոկոսադրույթ է սահմանվում 0.0% (տոկոսադրույթը բառերով): Ավանդի դիմաց տարեկան տոկոսադրույթը, ավանդի գործողության ժամկետում մնում է անփոփոխ:
- 1.5. Հաշվարկներում օգտագործվող տարեկան օրերի քանակը ընդունվում է 365 (366 օր՝ նահանջ տարվա համար) օր:
- 1.6. Ավանդի գծով հաշվարկված տոկոսները վճարվում են՝ - ժամկետի վերջում:
- 1.7. Ավանդի գումարի վրա թույլատրվում է կատարել անսահմանափակ քանակությամբ մուտքագրումներ (մինչև ավանդի գումարի 0.000.000 (զումարը բառերով) (նշվում է Ավանդի արժույթը) լրանալը):
- 1.8. Ավանդատուի կողմից վերջին մուտքագրումը Ավանդին կարող է կատարվել Պայմանագրով նախատեսված ավանդի վերադարձման օրվանից ոչ ուշ քան 30 (երեսուն) օրացուցային օր առաջ (ներառյալ Ավանդի վերադարձման օրը):
- 1.9. Թույլատրվում է Ավանդից կատարել ելքագրումներ սկսած Ավանդի ձևակերպման հաջորդ օրվանից, մինչև Ավանդի ժամկետի ավարտման նախորդ օրը: Ավանդից ելքագրման ենթակա գումարի չնվազող մնացորդը կազմում է տվյալ պահին Ավանդի 50%: Ավանդի ողջ ժամկետի ընթացքում չնվազող մնացորդն ունի ավելացման բնույթ (կուտակման արդյունքում): Ելքագրման դեպքում չնվազող մնացորդը չի նվազում:
- 1.10. Ավանդի նկատմամբ տոկոսները հաշվարկվում են գումարն ավանդային հաշվին մուտքագրելու հաջորդ օրվանից, մինչև այն վերադարձնելու նախորդ օրը:
- 1.11. Ավանդի ներդրման օր է համարվում սույն Պայմանագրի 1.1 կետում նշված գումարը Ավանդատուի Ավանդային հաշվին մուտքագրելու օրը (այսուհետ՝ Ներդրման օր):
- 1.12. Պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետից շուտ Ավանդը ստանալու դեպքում տոկոսները հաշվարկվում են տվյալ պահին իրավաբանական անձանց համար սահմանված ցախահնց ավանդի տոկոսադրույթով՝ ելնելով Ավանդի մնացորդից և փաստացի Բանկում պահված լրիվ օրերի թվից, եթե Ավանդատուն գերազանցել է սույն պայմանագրի 1.9. կետով նախատեսված նվազագույն մնացորդը:
- 1.13. Պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո Ավանդի գումարը փոխանցվում է Ավանդատուի ----- հաշվին:

2. Բանկի իրավունքներն ու պարտավորությունները

- 2.1. Բանկը պարտավոր է՝**
- 2.1.1. Վերադարձնել Ավանդատուին իր Ավանդի գումարը և հաշվեգրված տոկոսները սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով:
- 2.1.2. Սույն Պայմանագրի 1.1. կետում նշված գումարի չափով բացել Ավանդային հաշիվ և սպասարկել այն:

1. Общие положения

- 1.1. Банк открывает для Вкладчика срочный депозитный счет (далее Депозит) на сумму 0.000.000 (сумма прописью) (валюта Депозита прописью).
- 1.2. Сумму, предусмотренную в пункте 1.1. настоящего Договора, Банк, согласно настоящему Договору, переводит с банковского счета Вкладчика номер N _____ на депозитный счет.
- 1.3. Срок Депозита устанавливается на (срок прописью) дней, до / / (включительно).
- 1.4. Годовая процентная ставка Депозита устанавливается в размере 0.0 % (проценты прописью) годовых. Годовая процентная ставка Депозита в течение срока действия Депозита остается неизменной.
- 1.5. Используемое в расчетах количество дней в году принимается за 365 (366 в случае високосного года) дней.
- 1.6. Оплата начисленных процентов по Депозиту производится: - в конце срока.
- 1.7. Разрешается осуществлять взносы с неограниченным количеством пополнения (до достижения 0.000.000 (сумма прописью) (валюта Депозита прописью)).
- 1.8. Последний дополнительный взнос может быть внесен не позднее, чем за 30 (тридцать) календарных дней до дня окончания срока Депозита, установленного договором (включая день возврата Депозита).
- 1.9. Изъятия с Депозита можно производить, начиная со следующего дня оформления Депозита до дня, предшествующего дню истечения срока. Неснижаемый остаток суммы, подлежащий изъятию, составляет 50% Депозита на данный момент, при этом в течение всего срока действия Депозита неснижаемый остаток имеет нарастающий характер (в следствии накоплений). В результате изъятий зафиксированная максимальная сумма неснижаемого остатка не снижается.
- 1.10. Проценты на сумму Депозита начисляются со дня, следующего за днем ее перечисления на депозитный счет, до дня предшествующего ее возврату.
- 1.11. Днем внесения депозита считается день поступления суммы, указанной в пункте 1.1 настоящего Договора на депозитный счет Вкладчика (далее день внесения).
- 1.12. В случае досрочного востребования Вкладчиком суммы до истечения срока, указанного в пункте 1.3 Договора, превышающей дозволённую сумму Депозита, указанный в пункте 1.9 договора, Банк осуществляет перерасчет начисленных процентов за фактический срок Депозита по ставке Депозита до востребования юридических лиц, действующей в Банке на момент востребования Депозита.
- 1.13. После истечения срока, установленного пунктом 1.3 настоящего Договора, сумма Депозита переводится на банковский счет Вкладчика номер

2. Права и обязанности Банка.

- 2.1.Банк Обязан:**
- 2.1.1. Вернуть Вкладчику сумму его Депозита и начисленные проценты согласно срокам и порядку, указанным в настоящем Договоре.
- 2.1.2. Открыть и обслуживать Депозитный счет на сумму указанную в пункте 1.1. настоящего Договора.

2.1.3. Պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով վճարել Ավանդի և հաշվարկված տոկոսների գումարը:
2.1.4. Ավանդատուին տրամադրել ավանդային հաշվից քաղվածը:
2.1.5. Պահպանել և չհրապարակել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:
2.2. Բանկն իրավունք ունի՝
2.2.1. Օգտագործել Ավանդի գումարը:
2.2.2. Իր կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկացնել Ավանդատուին, վերջինիս կողմից տրամադրված հաղորդակցման ուղիով:

3. Ավանդատուի իրավունքներն ու պարտավորությունները

3.1. Ավանդատուի իրավունք ունի՝

3.1.1. Տնօրինել իր ավանդը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.1.2. Պահանջել Ավանդը մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի լրանալը:

3.2. Ավանդատուի պարտավոր է՝

3.2.1. Պահպանել Պայմանագրով սահմանված ավանդի պայմանները:

4. Վեճեր և տարաձայնություններ

4.1. Պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև ծագած տարաձայնությունները և վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

4.2. Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքերում վեճերը և տարաձայնությունները լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Այլ պայմաններ

5.1. Պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Տարաձայնությունների դեպքում հիմք է ընդունվում Պայմանագրի հայերեն տարբերակը:

5.2. Պայմանագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել կողմերի միջև լրացուցիչ պայմանագիր կնքելու միջոցով:

5.3. Պայմանագրով սահմանված դրույթները հանդիսանում են բանկային գաղտնիք և ենթակա չեն տրամադրման երրորդ անձանց:

5.4. Սույն պայմանագիրը ձեռք է բերում իրավական ուժ՝ Ավանդի գումարը ավանդային հաշվին մուտքագրելու պահից:

6. Ծանուցում

Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

Հարգելի Ավանդատու, ուշադրություն՝: Խնդրում ենք մինչև ավանդային պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին:

Չեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ), գտնվելու վայրը՝ 0010, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ.Սարգսյան 6, հեռ.՝ +374 10 58 35 14, ինտերնետային կայք՝ www.adgf.am.

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) սահմանումներին:

Հատուցման դեպքը

Չեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

- եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը, կամ

- եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետև՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է

2.1.3. Производить оплату суммы Депозита и начисленных процентов в сроки, указанные в Договоре.

2.1.4. Предоставлять Вкладчику выписку со счета по Депозиту.

2.1.5. Сохранять и не разглашать информацию, составляющую банковскую тайну.

2.2. Банк имеет право:

2.2.1. Использовать сумму Депозита.

2.2.2. При предоставлении Вкладчику информации об услугах Банка, по предоставленному со стороны Вкладчика методу связи.

3. Права и обязанности Вкладчика

3.1. Вкладчик имеет право:

3.1.1. Распоряжаться своим Депозитом в порядке, установленном законодательством РА.

3.1.2. Требовать сумму Депозита до истечения срока, установленного настоящим Договором.

3.2. Вкладчик обязан:

3.2.1. Соблюдать условия Депозита, установленные Договором.

4. Споры и разногласия

4.1. Разногласия и споры, возникшие между сторонами при исполнении Договора, разрешаются путем переговоров.

4.2. При недостижения согласия путем переговоров, споры и разногласия разрешаются на основании законодательства РА.

5. Прочие условия

5.1. Договор заключен в 2 (двух) экземплярах, которые имеют одинаковую юридическую силу, на армянском и русском языках. При разногласиях за основу принимается армянский вариант Договора.

5.2. Дополнения и изменения в Договоре могут быть сделаны путем заключения между сторонами дополнительного договора.

5.3. Установленные Договором положения являются банковской тайной и не подлежат передаче третьим лицам.

5.4. Договор получает юридическую силу с момента поступления суммы Депозита на депозитный счет.

6. Оповещение

Об условиях и порядке гарантирования возмещения депозитов
Уважаемый Вкладчик, внимание! Просим до заключения депозитного договора ознакомиться с положениями данного документа.

Гарантом возмещения Вашего депозита является Фонд гарантирующий возмещение депозитов (далее Фонд) местонахождение Фонда: 0010, Республика Армения, г. Ереван, ул. В.Саргсяна, д. 6, тел.: +374 10 583514, интернет сайт: www.adgf.am. Все определения, используемые в данном уведомлении соответствуют закону РА «О гарантировании возмещения банковских депозитов физических лиц» (далее Закон).

Случай возмещения

Ваш гарантированный депозит подлежит возмещению в следующих случаях:

- если в установленном законодательством Республики Армения порядке банк признан неплатежеспособным и решением Совета Центрального банка Республики Армения (далее ЦБ РА) подтвержден факт невозможности возврата банком депозитов в сроки, установленные законом и договорами, или

- если в установленном законодательством Республики Армения порядке банк признается банкротом (далее неплатежеспособный банк).

Максимальный размер гарантированного депозита и порядок расчета

Порядок расчета гарантированных депозитов установлен решением Совета Центрального банка Республики Армения N261-Н, от 26 августа 2008г.

Внимание! Все Ваши драмовые депозиты, имеющиеся в одном банке, считаются одним драмовым депозитом и все Ваши депозиты в иностранной валюте, имеющиеся в одном банке, считаются одним

<p>Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ: Ուշադրություն: Ձեր նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:</p>	<p>инвалютным депозитом, кроме не гарантированных депозитов.</p>
---	--

<p>Ավանդի արժույթային կառուցվածքը/ Валютная структура депозита</p>	<p>Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ/ Если в том же банке имеете только драмовые депозиты</p>	<p>Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ/ Если в том же банке имеете только инвалютные депозиты</p>	<p>Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ/ Если в том же банке имеете драмовые и инвалютные депозиты</p>	<p>Եթե դրամային ավանդը 2 միլիոն դրամից պակաս է/ Если драмовый депозит больше 2 миллиона драмов РА</p>	<p>Եթե դրամային ավանդը 2 միլիոն դրամից ավել է/ Если драмовый депозит меньше 2 миллиона драмов РА</p>
<p>Ավանդի երաշխավորման առավելագույն չափը/ Максимальный размер гарантированного депозита</p>	<p>4 միլիոն ՀՀ դրամ/ 4 миллиона драмов РА</p>	<p>2 միլիոն ՀՀ դրամ/ 2 миллион драмов РА</p>	<p>4 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)/ 4 миллиона драмов РА (гарантируется только драмовый депозит)</p>	<p>երաշխավորվում է դրամային ավանդը 2 միլիոն դրամի և արտարժույթային ավանդը 2 միլիոն դրամի արժեքի դրամային ավանդի տարբերության չափով/ драмовый депозит гарантируется полностью, а инвалютный депозит гарантируется в сумме разницы между 2 млн драмов РА и подлежащей к возмещению суммы драмового депозита.</p>	

Եթե դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և պարտավորության դրական տարբերության հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով և չափով: Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Если вы имеете в неплатежеспособном банке отдельный банковский депозит и, в то же время, в том же банке являетесь собственником совместного депозита, то в этом случае, в соответствии с установленными законом порядком и размером, подлежащая гарантированию сумма депозита складывается из суммы Вашего отдельного банковского депозита и суммы принадлежащей Вам доли в совместном банковском депозите.

Если у Вас имеется обязательство в отношении к неплатежеспособному банку, то в этом случае, в соответствии с установленными законом порядком и размером, подлежащая к возмещению сумма рассчитывается на основе положительной разницы между суммой Вашего банковского депозита и суммой обязательства.

Совместный банковский депозит двух или более вкладчиков считается отдельным банковским депозитом каждого лица, в размере доли, установленной для каждого лица договором совместного банковского депозита. Если договором совместного банковского депозита не установлены доли отдельных вкладчиков, то совместный банковский депозит делится между вкладчиками равными долями.

Не гарантированный банковский депозит

Ваш банковский депозит не гарантирован, если:
 Вы являетесь руководителем данного банка и/или членам семьи последнего;
 Вы являетесь лицом имеющим значительное участие в Банке, и/или членам семьи последнего;
 Вы как владелец (совладелец) депозита отказались от права собственности на свою часть депозита;
 Ваш депозит в установленном законом и иными правовыми актами порядке признан денежным средством, приобретенным преступным путем, до тех пор, пока владелец депозита не докажет обратное;
 Ваш депозит был внесен в данный банк по процентной ставке, не менее чем в 1,5 раза превышающей процентную ставку, предусмотренную публичным предложением Банка для идентичных депозитов на момент внесения банковского депозита;
 Ваш депозит был внесен в филиале банка, созданным за пределами РА.
 Ваш банковский депозит не подлежит к возмещению, ели в день случая возмещения Ваш депозит меньше 1000 драм РА.

Չերաշխավորված բանկային ավանդ՝

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝
 դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
 դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
 դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
 Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ դուք հակառակը չեք ապացուցել,
 Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
 Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:
 Ձեր բանկային ավանդը չի հատուցվում. եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 ՀՀ դրամից:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեսուրյա ժամկետում Հիմնադրամը անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը:

Գործընթացը սկսվում է զանգվածային լրատվական միջոցներում հատուցման վերաբերյալ Հիմնադրամի կողմից լրացույիչ հայտարարություն հրապարակելու պահից: Դուք կարող եք գրավոր

Порядок возврата и сроки гарантированных депозитов

В течение трех рабочих дней, после случая возврата, Фонд публикует объявление о случае возврата. После тридцати дней от случая возврата Фонд по средствам неплатежеспособного банка или другого банка осуществляет процедуру возврата. Процедура начинается с момента публикации о возврате в средствах массовой информации. Вы можете в срок не позже одного года от случая возврата представить Ваше письменное требование. В случае не представления письменного требования, после

պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի:

Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումներ՝ գրավոր պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը՝ հատուցված գումարի չափով համարվում է բավարարված: Հատուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարտավորությունը Ձեր նկատմամբ:

Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝

երաշխավորված ավանդ (այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուներից մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում, նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ),

չերաշխավորված ավանդ:

ՈՒՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:

указанного срока, со стороны Фонда не будет произведен возврат Вашего гарантированного депозита.

Фонд обязан осуществить возврат в течение трех месяцев после представления от вкладчиков требований о возврате, за исключением, случаев предусмотренных законом.

После возврата гарантированной суммы депозита денежное требование Вкладчика в отношении неплатежеспособного банка считается удовлетворенным в размере суммы возврата. Сумма, превышающая максимальный размер суммы возврата, считается обязательством неплатежеспособного банка или банка банкротства в отношении Клиента.

При внесении Ваш банковский депозит является

гарантированным по размеру и порядку, установленному законом (в случае тех совместных депозитов, при которых у одного или нескольких вкладчиков не считаются гарантированными банковские депозиты, отметить из общей суммы депозита гарантированную часть в процентном соотношении),

негарантированный депозит.

ВНИМАНИЕ! В целях наиболее удобного осуществления возмещения Вашего депозита предлагаем при любых изменениях данных, предоставленных Банку при вложении депозита (данные в удостоверяющего личность документа, социальной карты, адрес, номер телефона и т.д.) сразу уведомить Банк.

<p>«ՎՏԲ – Հայաստան Բանկ» ՓԲԸ</p> <p>հասցե ՀՎՀՀ Հեռ. Պաշտոն</p>	<p>ЗАО "Банк ВТБ(Армения)"</p> <p>адрес ИНН Тел. Должность</p>
<p>_____ /ստորագրություն/ /подпись/</p>	<p>_____ /Կ.Տ./ /М.П./</p>
<p>Ավանդատու (ԱՁ)</p>	<p>Вкладчик (ИП)</p>
<p>հասցե ՀՎՀՀ Հեռ.</p>	<p>адрес ИНН Тел.</p>
<p>_____ /ստորագրություն/ /подпись/</p>	<p>_____ /Կ.Տ./ /М.П./</p>